Առողջ ապրելակերպի խթանման ծրագրի կատարողական

Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանման ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 16-ի «Ուսուցիչներին՝ առողջ ապրելակերպի խթանման հարցերով ուսուցման ծրագիրը և ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 3280-Ա հրամանով հաստատված՝ 2019 թվականին Կրթության և գիտության նախարարության մասնագետների հետ համատեղ Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի թվով 276 առողջ ապրելակերպ դասավանդող ուսուցիչ վերապատրաստվել է առողջ ապրելակերպի, ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների՝ անառողջ սնուցման, ցածր ֆիզիկական ակտիվության, ծխախոտի, ալկոհոլի օգտագործման կանխարգելման հիմնահարցերով:

https://ncdc.am/?p=4573

https://www.facebook.com/ncdcarm/photos/a.2571462932934906/2571463062934893/?type=3&theater

https://www.facebook.com/ncdcarm/photos/a.885425658205317/2576227799125086/?type=3&theater

2) Առողջապահության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 3372-Ա հրամանով նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ գործողությունների իրականացման համար ստեղծված մշտապես գործող աշխատանքային խմբի շրջանակներում՝ առողջապահության նախարարության մասնագետները մասնակցել են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում առողջ ապրելակերպի քարոզչության և վնասակար վարքագծային սովորություններից զերծ մնալուն ուղղված ազգային քաղաքականության զարգացման և տեխնիկա-մեթոդական աջակցության աշխատանքների իրականացմանը, մասնավորապես՝ համակարգելով վերանայվող հանրակրթական չափորոշիչներում առողջ ապրելակերպի թեմաների պատշաճ ներառման աշխատանքները:

3) Առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի «Բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության խթանում» մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3464-Ա հրամանով հաստատված մեթոդաբանությունը ներդնելու նպատակով 2018 թվականին ընտրվել է պիլոտային երկու (Արարատի և Արմավիրի)

մարզ: Նշված մարզերում մարզպետարանների աջակցությամբ շարունակվել է աշխատանքը առաջնային օղակի բժիշկների հետ՝ բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվությունը խթանելու մեթոդաբանության ներդրման վերաբերյալ: Պիլոտային մարզերում 2019թ-ի ընթացքում ֆիզիկական ակտիվության խթանման վերաբերյալ խորհրդատվություն է ստացել 8446 անձ:

4) Առողջապահության նախարարության մասնագետների կողմից կազմակերպվել և իրականացվել են դասընթացներ «ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈԹԵԼ» հյուրանոցային համալիրի, ինչպես նաև թվով 6 նախադպրոցական կազմակերպությունների անձնակազմի շրջանում: Ընդհանուր թվով 188 հյուրանոցային համալիրի և նախադպրոցական կազմակերպության անձնակազմ ուսուցանվել է՝ առողջ սնուցման, սննդամթերքի անվտանգության, սննդային թունավորումների կանխարգելման, ինչպես նաև ֆիզիկական ակտիվության խթանման հարցերով:

5) Առողջապահության նախարարության մասնագետները մասնակցել են ԱՀԿ-ի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված, Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի կողմից իրականացված «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ» ազգային հետազոտության արդյունքների ներկայացմանը, «Երեխաների և դեռահասների առողջության պահպանմանն ուղղված հանդիպմանը», որի ընթացքում քննարկվել են երեխաների և դեռահասների առողջության առկա իրավիճակը, ներկայացվել են հանրապետությունում առկա առողջ դպրոցները, որոնց աջակցում է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ): Առաջարկվել է ներդնել «Երեխաների և դեռահասների առողջության պահպանման» ԱՀԿ-ի եվրոպական գրասենյակի ռազմավարությունը:

6) Մայիսի 31-ին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շրջակայքում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն և «doctors.am» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպել են «Առողջ երեխա՝ առողջ ապագա» խորագրով մանկական բեմադրություն թիվ 61 միջնակարգ դպրոցի 2 դասարանի աշակերտների մասնակցությամբ՝ նվիրված Ծխախոտի դեմ պայքարի համաշխարհային օրվան: Միջոցառման նպատակն էր բարձրացնել հանրության իրազեկվածությունը ծխելու վնասակար հետևանքների վերաբերյալ, ապահովել բնակչության իրազեկվածությունը

անառողջ ապրելակերպ վարելու հետևանքով առաջացող վտանգների մասին, ինչպես նաև տարածել առողջ ապրելակերպի գաղափարը:

7) Բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են իրականացվել ՀՀ մարզային շուրջ 200 բժիշկ մասնագետների շրջանում, ներկայացվել են STEPS ազգային հետազոտության արդյունքները, կարևորվել է ՈՎՀ կանխարգելման և պայքարի գործում մարզային մասնագիտական հանրույթի անմիջական մասնակցությունը, բնակչության առողջության վերաբերյալ գրագիտության բարձրացման անհրաժեշտությունը:

8) ՀՀ առողջապահության նախարարության մասնագետները մասնակցել են տարբեր լրատվամիջոցներով առողջ ապրելակերպին նվիրված հաղորդաշարերին, թոք-շոուներին, որտեղ ներկայացվել են առողջ ապրելակերպի հիմնախնդիրները, առկա մարտահրավերները, ոլորտում իրականացվող միջոցառումները (հակածխախոտային, ֆիզիկական ակտիվության բարձրացման, առողջ սննդակարգի պահպանման և այլն): Ծխախոտի դեմ պայքարի շրջանակներում առողջապահության նախարարության կողմից իրականացվել են 31 լուսաբանում, որից՝ 4 մամլո ասուլիս, 2 հանրային քննարկում, հեռուստառադիոյի և էլեկտրոնային կայքերի համար կազմակերպվել է 26 հարցազրույց, ԱՆ պաշտոնական կայքում հրապարակվել են 3 հաղորդագրություններ, որոնք տրամադրվել են լրատվամիջոցներին: Առողջ սնունդ, ֆիզիկական ակտիվություն թեմայի շրջանակներում առողջապահության նախարարության կողմից իրականացվել է 5 լուսաբանում, որից՝ հեռուստառադիոյի և էլեկտրոնային կայքերի համար կազմակերպվել են 4 հարցազրույցներ, ԱՆ պաշտոնական կայքում հրապարակվել է 1 հաղորդագրություն, որը տրամադրվել է լրատվամիջոցներին:

9) 2019 թվականի ընթացքում ՀՀ-ի բոլոր մարզպետարաններում եռամսյակը մեկ անգամ կազմակերպվել է քննարկում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերով, մասնավորապես՝ յուրանքաչյուր մարզին ներկայացվել է տվյալ մարզում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության և մահացության իրավիճակը, քննարկվել են այդ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների կանխարգելման հարցերը, մասնավորապես՝ շեշտադրվել է բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզչության, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացման կարևորությունը:

10) «Հայաստանի և Վրաստանի համայնքներում ծխախոտի ծխից ազատ գոտիների ստեղծում. ռանդոմիզացված հետազոտություն» ծրագրի շրջանակում, որի նպատակն է նպաստել համայնքներում ծխախոտի ծխից ազատ գոտիների ստեղծմանը և երկրոդային ծխի ազդեցության նվազեցմանը, ներգրավվել են տեղական համայնքների ընտրված ներկայացուցիչներ և համայքներում իրականացվել են կարողությունների զարգացման գործողություններ: Համայնքային կոալիցիաները ընդգրկվել են կարողությունների զարգացման գործողություններում՝ մասնակցել են անծուխ միջավայր ստեղծելուն ուղղված դասընթացներին, տարեկան աշխատանքային հանդիպումներին: Միաժամանակ կազմակերպվել են համապատասխան կրթական հանդիպումներ և տրամադրվել են կրթական նյութեր, որոնք նպաստել են տեղական մակարդակում հակածխախոտային արշավների/գործողությունների և այլ միջոցառումների իրականացմանը: Վերապատրաստման դասընթացներից հետո համայնքային կոալիցիաներից յուրաքանչյուրը կատարել է իր համայնքում իրավիճակի գնահատում՝ հարցազրույցների և տվյալների հավաքագրման միջոցով, պատրաստվել է տարեկան աշխատանքային պլան, համապատասխան հաշվետվություններ և իրականացնելու է աշխատանքային պլանով նախատեսված ծխախոտի և երկրորդային ծխի ազդեցության վերահսկմանն ուղղված գործողություններ՝ Էմորի համալսարանի, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ուղղորդմամբ և աջակցությամբ:

11) Մշակվել և սահմանված կարգով հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի նոյեմբերի 15-ի «Անառողջ սնուցման կարճատև հետազոտությունների մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3408-Ա հրամանը:

12) 2017թ. ՀՀ առողջապահության նախարարությունը ԱՀԿ փորձագետների հետ կայացած մի շարք հանդիպումների ընթացքում քննարկել է ՈՎՀ-ի կանխարգելման և պայքարի գործում ներդրումներ կատարելու տնտեսական վերլուծության անհրաժեշտությունը և 2018 թվականին գնահատվել է ՈՎՀ տնտեսական բեռը, ՈՎՀ-ի կանխարգելման համար անհրաժեշտ մի շարք միջոցառումների ֆինանսավորման ծավալները: Գնահատման արդյունքներն ամփոփված են «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը Հայաստանում Ներդրումները հիմնավորող փաստարկներ» զեկույցում՝ 2019 թվականի մայիսի 3-ին տեղի է ունեցել

շնորհանդեսը:
http://www.nih.am/assets/pdf/researches/d5446d89cfcbde6e1893d9fe28d70daa.pdf:

13) ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 3090-Ա հրամանով հաստատվել է «Երևան քաղաքի 10-12 տարեկան դպրոցականների առողջական վիճակի վրա վարքագծային գործոնների ազդեցության 2015-2020 թթ. հետազոտության ծրագիրը», որի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ 2015 թվականից իրականացվում է հետազոտություն՝ Երևան քաղաքի 10-12 տարեկան դպրոցականների առողջական վիճակի վրա վարքագծային գործոնների տարածվածության վերաբերյալ, որի արդյունքների հիման վրա իրականացված վերլուծությունները և զեկույցները տեղադրվել են առողջապահության նախարարության կայքում: 2019 թվականին իրականացվել է 2018 թվականի արդյունքների վերլուծություն: Ծրագրի 5-րդ փուլը իրականացվել է 2019 թվականին, որի արդյունքները վերլուծության փուլում են:
https://ncdc.am/?p=5237&fbclid=IwAR03fGKAFOEztMLEpMhnH_Vq8c_9TkyegL4I4NC_vC1QIHQRu0Prew5ZByA)
https://www.facebook.com/ncdcarm/photos/a.885425658205317/2595815390499660/?type=3&theater

14) «Այլ երկրների հետ համագործակցություն և համապատասխան փորձի փոխանակում/տրամադրում» միջոցառման իրականացման ուղղությամբ առողջապահության նախարարության «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության մասնագետները 2019 թվականի մայիսի 15-ից 16-ը Բոննում (Գերմանիա) մասնակցել են ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի կողմից կազմակերպված «Օդի աղտոտվածության ազդեցությունը մարդու առողջության վրա» թեմայով 21-րդ միջազգային հանդիպմանը, իսկ նոյեմբերի 12-ից 15-ը՝ Թբիլիսիում (Վրաստան) Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպական գրասենյակի կողմից կազմակեպված «Օդի որակ և առողջություն» աշխատաժողովին, որի ընթացքում ուսուցանվել են ԱՀԿ-ի կողմից մշակված AirQ+ (v1.3) համակարգչային ծրագիրը, որը հնարավորություն կընձեռի իրականացնել մարդու առողջության վրա օդի աղտոտվածության կարճատև և երկարատև ազդեցության գնահատման հաշվարկ:

Առողջապահության նախարարության մասնագետները նոյեմբերի 5-ից 6-ը Մոսկվա քաղաքում մասնակցել են ԱՀԿ-ի կողմից կազմակերպված՝ բնակչության շրջանում առողջության հարցերով գրագիտության բարձրացմանն ուղղված աշխատանքային քննարկմանը, որը հնարավորություն կընձեռի բարձրացնել բնակչության շրջանում առողջության հարցերով իրազեկվածության մակարդակը: